

ՀՈՒՆԻՍ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություն	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	21
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	24
3.6. 1-85 թեժ գիծ	26
4. Լրատվական ծառայություն	27
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	30
5.1. Փաստաթղթերի մշակում	31
5.2. Դասընթացներ/սեմինարներ	31
5.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	32
5.4. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության, մարզպետարանների, ՄԻՄ-երի և այլ գերատեսչությունների հետ..	33
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	34
6.1. Համակարգչային ցանց	35
6.2. Բնտերակտիվ համակարգ	35


ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քաղաք Երևան

«Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածք

● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Սարի Թաղ 28 փողոցի ջրամատակարարումն իրականացվում էր $d=80$ մմ քայքայված պողպատե ջրագծով, ինչի պատճառով անհնարին էր դարձել վերջիններիս հետագր շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից $d=80$ մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=75$ մմ $L=200$ գծ/մ պոլիէթիլային խողովակներով, իրականացվել են անհատական միացումներ $d=25$ մմ $L=200$ գծ/մ ընդհանուր երկարությամբ, սահմանազատման կետում փոխարինվել է թվով 15 ջրաչափական սարք:



● Մյունիքի մարզի «Մուխուրթուրյան-Աշոտավան-Հացավան» ջրատարի Հացավան գյուղը սնող հատվածը պարբերաբար վթարվում էր տարիներ առաջ տեղադրված անորակ խողովակների պատճառով, որոնք չէին դիմանում բարձր ճնշմանը:



Հետագա վթարներից խուսափելու և կանոնավոր ջրամատակարարում ապահովելու համար «Միսիան» տեղամասի աշխատակիցների կողմից նշված հատվածը փոխարինվել է 16մթն $d=110$ մմ պ/է խողովակներով $L=50$ գծ/մ ընդհանուր երկարությամբ:

Քաղաք Միսիան

● Շիրակի փողոցով անցնող d=50մմ ջրագծի L=158զծ/մ հատվածի խողովակները ոչ ճնշումային էին և չէին համապատասխանում խմելու ջրի նորմերին և պահանջներին, հաճախակի էին կրկնվող վթարները: Նույն փողոցով անցնող d=50-32մմ ջրագծի L=318զծ/մ երկարությամբ հատվածը անցնում էր սեփական տնատիրությունների տարածքով, որտեղ առկա էր ջրակորուստ:

«Միսիան» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է d=50մմ L=476զծ/մ պոլիէթիլենային ջրագիծ, որի արդյունքում խնայվել է 3լ/վ ջրաքանակ, բացառվել են ապօրինի միացումները:



Հունիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2261
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	62006
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	61404
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	28454
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	17
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3834.5
Կառուցված ջրագիծ	մ	7841.7
Կառուցված կոյուղագիծ	մ	487
Վերացված գաղտնի վթարներ	հատ	16
Փոխարինված փական	հատ	83
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	438
Մաքրված դիտահոր	հատ	898
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	12.5
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	1460
Ջրահեռացման ցանցում	հատ	2445
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հունիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	957	996	747

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	352	6	2	2	1	3	0	0	0	366
Փոխարինված	217	16	4	3	3	6	0	3	1	253
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	177	9	5	2	2	3	1	2	1	202
Ընդամենը	746	31	11	7	6	12	1	5	2	821

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 821 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1040	224	29
2	Սաշտոց	1530	212	117
3	Շահումյան	925	158	71
4	Զեյթուն	510	264	12
5	Շիրակ	1260	544	11
6	Արթիկ	600	110	0
7	Ապարան	0	36	6
8	Ալավերդի	2580	34	36
9	Աշոցք	0	3	0
10	Բերդ	30	13	0
11	Իջևան	200	54	4
12	Լոռի	4290	240	0
13	Նոյեմբերյան	200	30	0
14	Սպիտակ	520	29	0
15	Ստեփանավան	65	29	0
16	Թալին	0	10	0
17	Տաշիր	360	10	0
18	Չարենցավան	960	91	0
19	Արովյան	2410	71	0
20	Հրազդան	2560	120	24
21	Կենտրոն	215	266	12
22	Հյուսիս	150	205	0
23	Հարավ	0	316	15
24	Էրեբունի	0	209	0
25	Արմավիր	0	93	0
26	Արտաշատ	0	90	20
27	Էջմիածին	0	207	81
28	Աշտարակ	0	37	0
29	Արարատ	0	78	17
30	Մալիս	0	53	48

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	տեղ	գծ/մ
31	Գավառ	515	19	0
32	Սևան	550	72	12
33	Մարտունի	0	25	0
34	Վարդենիս	0	12	0
35	Ճամբարակ	31	14	0
36	Դիլիջան	50	44	12
37	Վայք	0	19	0
38	Եղեգնաձոր	60	9	0
39	Ջերմուկ	0	41	0
40	Սիսիան	0	39	0
41	Գորիս	0	46	0
42	Կապան	185	93	10
43	Մեղրի	0	30	0
	Ընդամենը	21796	4299	537

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՅՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի մանր մասնիկների կոնվեյերը խցանվել էր, իսկ քերիչ սանրը իր տեղից խախտվել էր: Արդյունքում մաքրվեց խցանումը իսկ քերիչ սանրը կարգաբերվեց և այժմ սարքավորումներն աշխատում են անխափան: Պոմպերի հորից նաև դուրս բերվեց վերջերս նորոգված կոյուղու պոմպը և զննվեց պոմպի հերմետիկությունը:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի պոմպը խցանվել էր և ջուր չէր մղում, որը դուրս բերվեց մաքրվեց և տեղադրվեց: Խցանվել էին նաև հակադարձ փականները որոնք ևս ապամոնտաժվեցին, մաքրվեցին և տեղադրվեցին: Այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին և այժմ օդամուղն աշխատում է բնականոն ընթացքով: Կարգաբերվեցին նաև մանր ճաղավանդակի քերիչ սանրերը, որոնք աշխատանքի ընթացքում խախտվել էին իրենց տեղից:

- Մարտունիի կեղտաջրերի մաքրման կայանի սարքավորումների ցանցերի լվացման համար նախատեսված էլեկտրական փականները խցանվել էին, որի արդյունքում ցանցերը չէին մաքրվում: Արդյունքում փականները ապամոնտաժվեցին և մաքրվեցին:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	68,557	28.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	60,643	27
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	171,093	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	125,777	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	107,047	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,275	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	9,923	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	14,700	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	15,600	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	3,341	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ


Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում	115
Էլեկտրական սարքերի գնում և կարգավորում	12
Պոմպի տեղադրում	1
Այց	3
Պոմպի ապամոնտաժում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հունիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:



«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հունիս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 2 մեքենայի շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները: Թվով 9 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 8 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուումի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սաստեղիտներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Փոխարինվել են թվով 76 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 16 անվադող նորոգվել է:

Թվով 4 մեքենա-մեխանիզմի մարտկոց փոխարինվել է նորերով:

Թվով 6 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 7 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուփ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 7 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 8 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 5 մեքենայի վրա իրականացվել են գնդատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Նորոգվել է թվով 2 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմների վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.07.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 581,690 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. հունիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	672,747	555,467	82,6
	Իրավաբանական անձ	30,766	26,223	85,2

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	735,043	593,201	80,7
	Իրավաբանական անձ	36,051	26,299	72,9

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 561 նոր բաժանորդ:


2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը: Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4872 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2156	2240	296	4692
	Իրավաբանական անձ	99	70	11	180
	Ընդամենը	2255	2310	307	4872

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հունիս ամսին փոխարինված 4872 ջրաչափերի մոտ 54%-ը (կամ 2617 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 224,265 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հունիս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,148 մլն. դրամ (98 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հաշվետու ամսին գերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հունիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 283 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 31.7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.07.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հունիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	9,444	2,768
Բնակիչ-բաժանորդներ	6,781	1,750
Իրավաբանական անձեր	2,662	1,018

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 330.6 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.07.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	703,038	591,579	84.15	34,952	26,290	75.22
	Առանց ջրաչափի	32,005	1,622	5.07	1,099	9	0.82

Տվյալների բազայում 01.07.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	874,523	400,062	45.75	38,762	11,320	29.20

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 6156 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 801 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2390	1965	81.9
գ.Պոռչյան	1625	1099	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5928	1879	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Միսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 11484, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 11679, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1779, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2435, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1598, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2652 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4486 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	862	431,683	78,884,177

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հունիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.8%, ինչը 0.8% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 66 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2022թ-ի հունիս ամսին, 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 165 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 168 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 42502 ԿՎտ.ժ (8.61 %) այն դեպքում, երբ նորակառույց շենքերի յոթ պամպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 8 պամպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 10296 կՎտ.ժ: Իսկ առանց այս պամպակայանների էլ. էներգիայի ծախսի, այն կնվազեր 52798 ԿՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում 70 հասցեներում կատարվել է էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման և պոմպակայանի զննման աշխատանքներ: «Օսկ քար» ք/կ-ի առևտրային էլ. հաշվիչը փոխարինվել է նորով:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 3999 կՎտ.ժամ -13.4%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 35 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 23 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 376 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 262 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 7 հասցեներում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում երկու հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- ▶ Տիգրանյան 3 (Qz-25),
- ▶ Աբելյան 17 (Ma-16):

Տեղադրված գումարային 130 ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 31,670կՎտ.ժ կամ 13.49%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 42 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


● 2022թ. հունիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 69 153 ԿՎտ/ժամ (1,66%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 419 542 ԿՎտ.ժ/ամիս կամ 16,19%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 493 554 ԿՎտ.ժ կամ 6,15 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են հունիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.


Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Գյուղերի և քաղաքների ամբողջական տվյալների բազաների ստեղծում, թարմացում և կապվող ջրատար համակարգերի թարմացում, միավորում	Գյուղեր և քաղաքներ	59
Գեղարքունիքի մարզի՝ ք. Գավառի, գ. Գանձակի, գ. Սարուխանի, Լոռու մարզի գ. Ախթալայի բաշխիչ ցանցի ջրագծերի փոփոխում և թվայնացում: Փականների և դիտահորերի տվյալների մուտքագրում ԱՏՀ	Մուտքագրում ԱՏՀ	1
Սյունիքի մարզի Քարաշեն, Հալիձոր, Տեղ համայնքների ջրամատակարարման բաշխիչ ցանցի տվյալների փոփոխում	համայնք	3
Հովղարայի ջրատարի ուրվագծի, տվյալների վերանայում, կորդինատների հիման վրա տվյալների մուտքագրում ԱՏՀ	ջրատար	1
Նուռնուս, Բյուրեղավան, Արզնի համայնքների ջրատարի տեղադիրքի վերաբերյալ ճշման աշխատանքների հիման վրա ջրատարի թվային շերտի թարմացում	համայնք	3
Երևան քաղաքի Արաբկիր համայնքի ջրի բաշխիչ համակարգերի հիդրավիկ մոդելավորման համար համակարգի ջրագծերի ուղղումներ և թարմացումները	քաղաք	1
ՀՀ ճանապարհների և շենք/շինությունների թվային շերտերի թարմացում և բազավորում	բազավորում	1
Գոտիավորման բաժնի համար գծագրվել են ջրաչափի տեղափոխման սխեմաներ	սխեմա	38
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից Վարձակալությամբ զբաղեցրած տարածքների թվայնացում՝ վկայականների հիման վրա	վկայական	90
ՃԿՓ-ի տվյալների բազաների ճշգրտում և լրացում	լրացում	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	124
Ախուրյան և Բաղրամյան գյուղերի ջրագծերի հիդրավիկ մոդելավորում՝ ԱՏՀ-ում լրացված և մշակված բազաների հիման վրա	գյուղեր	2
Քաղաք Ալավերդի, ք. Վարդենիս, ք. Սիսիան, ք.Վայք, ք.Արթիկ, ք. Մարտունի, ք.Կապան, ք. Բերդ, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր, ք. Եղեգնաձոր կոյուղագծերի (251 կմ, 2614 դիտահոր) թվայնացում	քաղաք	12
«Արևելք» և «Արևմուտք» Շահագործման տեղամասերի կողմից հունիս ամսին կատարված ջրամատակարարման և կոյուղատար ցանցում կատարած աշխատանքների համակարգում	համակարգում	1
Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2291
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1769
Telegram ալիքի ստեղծում	ալիք	1
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	54
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	532
Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	8286
Մարզային կոյուղու երկարությունը	կմ	1678

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Ապարանի ջրատար

Կարմիր իսաչի փականային հանգույցում՝ Ապարանի ջրատարից դեպի Լուկաշին ՕԿՁ, ջրաքանակի հոսքի ընթացքում ջրատարում նկատվում էր ճնշման բարձրացում: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հանգույցից մի քանի մետր հեռավորության վրա՝ ջրատարի մեջ, կա բաց վիճակում ամրացված հակադարձ փական, որն էլ մեծ ջրաքանակների դեպքում հանդիսանում է ճնշման բարձրացման պատճառ: Տվյալ հակադարձ փականն ապամոնտաժվել է «Մաշտոց» ՇՏ-ի աշխատակիցների կողմից:



Արզական-Խարբերդ ջրատար

Ջրատարի վրա՝ Նորաբացի չոր խցում գոյություն ունեցող խցափակված հատվածը փաստվել է, ինչի արդյունքում առաջացել է մոտ 15000լ/վ ծավալով վթար: Ջրատարի նշված հատվածը ջրազրկվել է, ու կատարվել են վթարավերականգնողական աշխատանքներ: Դրանից հետո ջրատարի աշխատանքը վերականգնվել է:



Գառնի-Երևան ջրատար



Ջրատարի վրա առաջացել էր վթար ≈ 50 լ/վ մեծությամբ, որը հնարավոր եղավ առանց կանգառի վերացնել «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների ջանքերով:

Արզնի 2 ջրատար

Ջրատարի վրա՝ Կորեայի ձոր թաղամասի հատվածում առաջացել էր ≈ 150 լ/վ ծավալով վթար: Կազմակերպվել է ջրատարի կանգառ: Կատարված վթարավերականգնողական աշխատանքներից հետո ջրամատակարարումը վերականգնվել է:




Հունիս ամսվա ընթացքում կատարվել են նաև շրջայցեր ջրատարներ, ջրաքանակների չափումներ և ջրաքանակի բաշխման աշխատանքներ

Գոտիավորման վարչություն

Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Չայկովսկի փողոցում գտնվող Բարեկամության այգին, որը հետերկրաշարժյան տարիներին ծառայել է որպես տնակային ավան տեղամասի կողմից, Գոտիավորման բաժնի աջակցությամբ ամբողջությամբ մաքրվել է, անջատվել է հին, վթարված ջրամատակարարման ցանցը: Վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են նաև կորած դիտահորեր: Արդյունքում խցափակվել և շահագործումից հանվել են $D=300$ մմ $L=310$ մ թուջե, $D=125$ մմ $L=900$ մ պողպատե, ինչպես նաև բազմաթիվ վթարված $D=20-25$ մմ հին տնային միացումներ: Տնտեսվել է 4-5/վ ջրաքանակ:



● Գյումրի քաղաքի Հ. Մարգարյան 2-րդ նրբանցք 11 տան մեջ տեղի ունեցած ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ վթարվել է Շիրակացի 56 շենքը սնուցող ջրագիծը: Այն անցնում էր բնակելի տան միջով: Վթարված ջրագիծը ասբեստից լինելու պատճառով հնարավոր չէր վերականգնել, ուստի որոշվել է ներանցման միջոցով կառուցել $D=63$ մմ ՊԷ $L=25$ մ ջրագիծ՝ տնտեսելով $Q = 1,5-2$ լ/վ ջրաքանակ:




Չկալովկա գյուղ

● Չկալովկա գյուղի մուտքի մոտ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են թվով 2 անսարք վիճակում գտնվող ջրաչափեր, որոնցից մեկում անցնող ջրաքանակը $Q = 5$ լ/վ, իսկ մյուսում $Q=2$ լ/վ: Առաջին ջրաչափը փոխարինվել է նորով, իսկ երկրորդ միացումը ժամանակավորապես կապարակնվել է:




Քաղաք Գավառ



● Գավառ քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Ստեփան Շահումյան փողոցով անցնող հին, պողպատե, $D=100$ մմ ջրագծում առկա էր ջուր: Նշված ջրագիծը շահագործումից հանելու արդյունքում տնտեսվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ:

Հացառատ-Լճաշեն

● Հացառատ-Լճաշեն D=500մմ պողպատե ջրատարի վրա իրականացված վթարառորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար «Բուրգեր» ռեստորանի մոտ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=2լ/վ ջրաքանակ:




Քաղաք Հրազդան



● Հրազդան քաղաքում իրականացված աշխատանքների արդյունքում D=500մմ պողպատե ջրագծից միացված հայտնաբերվել է անհայտ D=100մմ պողպատե միացում, որը խցափակելուց հետո տնտեսվել է Q=12 ր/վ ջրաքանակ:

Քաղաք Երևան

● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Լվովյան 2 շենքի մոտ Մոլդովական փողոցը սնող ջրագծի վրա տեղադրվել է D=100մմ ՃԿՓ: Արդյունքում տնտեսվել է Q=3 ր/վ ջրաքանակ:



● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ իրականացվել են վթարառորոնողական աշխատանքներ Լոր Լորքի 5-րդ զանգված Միկոյան 17ա շենքի մոտով անցնող D=500մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=8լ/վ ջրաքանակ:

● «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների հետ Վարդաշեն 8-րդ փողոցում իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար D=100մմ թուջե ջրագծից միացված D=20մմ ջրագծի վրա: Վթարված ջրագիծը խցափակելուց հետո տնտեսվել է Q=0,5 ր/վ ջրաքանակ:




● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ Արցախի 32 հասցեի հարևանությամբ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար D=100մմ թուջե ջրագծից միացված D=25մմ պողպատե ջրագծի վրա: Շահագործումից հանվել է L=10մ ջրագիծն՝ արդյունքում տնտեսելով Q = 0,5 ր/վ ջրաքանակ:

● Վարչության և «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների համատեղ ուժերով Եղբայրության 16 շենքի հարևանությամբ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 3,5 լ/վ ջրաքանակ:



● «Շահումյան» տեղամասի աշխատակիցների հետ Անդրանիկի 78 հասցեում իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=32 լ/վ ջրաքանակ:

● «Մաշտոց» տեղամասի և գոտիավորման աշխատակիցների համատեղ ուժերով ուսումնասիրվել է Մերձավանի՝ զորամասերին սնուցող ջրագիծը: Հայտնաբերվել է վթար D = 100մմ թուջե ջրագծի վրա, որը վերացնելուց հետո տնտեսվել է Q=12լ/վ ջրաքանակ:



● Նույն տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Բաշինջաղյան 71 շենքի դիմացով անցնող D=100մմ պողպատե ջրագծին միացված D=80մմ ջրագծի վրա: Վթարված ջրագիծը միացման կետից խցափակելուց հետո տնտեսվել է Q=7լ/վ ջրաքանակ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● **Քաղաք Վարդենիս** Ակներ քլորակայանում փոխարինվել է հեղուկ քլորի պղնձյա խողովակը՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



● **Գյուղ Մասիսի** Արարատյան 1/2 քլորակայանում հեղուկ քլորի սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի մտնող ջրագծի խափանված ճնշման կարգավորիչը փոխարինվել է նորով:

● **Քաղաք Մասիսի** Արարատյան 3/4 քլորակայանում վերանորոգվել է երրորդ և չորրորդ հերթին սնուցող քլորաջրի խողովակները՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● **Քաղաք Վայքի** «Հեր-Հեր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի մաշված քլորագիծը փոխարինվել է՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Կատարվել է վակուում կարգավորիչի սարքավորման ապամոնտաժում և մոնտաժում կողքի սենյակ,




որը կապահովի հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը և անցում բալունից կոնտեյներին (կապահովի մեկ ամսվա փոխարեն երեք ամիսը մեկ անգամ քլորի մատակարարում):

● **Քաղաք Վայքի Մալիշկա** քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով փոխարինվել է վակուում կարգավորիչի դուրս եկող քայքայված մանեկը և պղնձյա խողովակը:



● **Քաղաք Սևան,** ճամբարակ քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած պոմպը փոխարինվել է նորով, որը ապահովելու է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:

● **Քաղաք Արթիկ** Մանթաշ քլորակայանում շարքից դուրս եկած պոմպը փոխարինվել է նորով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● **Քաղաք Երևան** Ավան Բաբաջանյան 3/1 վերանորոգվել է վակուում կարգավորիչը՝ որպես պահեստային վակուում կարգավորիչ:



● **Քաղաք Գյումրի** Վարդգաղ քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է նոր վերանորոգվող քլորակայանների սարքավորումների ապամոնիտաժում և մոնիտաժում:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 45875 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 11578 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8967 զանգ (77,4 %), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2611 զանգ (22,6%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 34297 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 25870 զանգ (75,4%), իսկ մարզերինը՝ 8427 զանգ (24,6%):
- 2021թ. հունիսի համեմատ՝ 2022թ. հունիս ամսին 4,12 %-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 13,78 %-ով: 2021թ. հունիսի համեմատ՝ 2022թ. հունիս ամսին՝ 74%-ով ավելացել է հայտարարությունների լսուժն ավտոմատ ծառայության միջոցով, 29%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը և 8 %-ով՝ 5 բողոքից ավել զանգերի քանակը:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկից



	Ստորաբաժանում	2021 հունիս	2022 հունիս	
Առևտրային	Ընդամենը	11120	11578	4.12%
	Երևան	8712	8967	2.93%
	Մարզեր	2408	2611	8.43%
Շահագործում	Շահագործում	39779	34297	-13.78%
	Հարավ	13875	13611	-1.90%
	Շենգավիթ	1927	2020	4.83%
	Կենտրոն	2531	2638	4.23%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	2838	2436	-14.16%
	Էրեբունի	2122	2993	41.05%
	Պոմպեր	1146	854	-25.48%
	Մարզեր	3311	2670	-19.36%
	այդ թվում կոյուղու վթար	58	68	17.24%
	այդ թվում դիտահորի խցանում	1928	2438	26.45%
	Հյուսիս	25904	20686	-20.14%
	Արարկիլի	6505	4189	-35.60%
	Քանաքեռ-Զեյթուն	2757	1920	-30.36%
	Մաշտոց	3864	2999	-22.39%
	Շահումյան	3625	4050	11.72%
	Պոմպեր	2056	1771	-13.86%
	Մարզեր	7097	5757	-18.88%
այդ թվում կոյուղու վթար	91	148	62.64%	
այդ թվում դիտահորի խցանում	3300	3602	9.15%	
Ընդամենը	50899	45875	-9.87%	

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Հունիսը Հանրային կապերի /ՀԿԲ/ բաժնի համար սկսվեց Երեխաների պաշտպանության միջազգային օրով, որի առթիվ ուղերձ հրապարակեց [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia) էջում:


Մակայն ամսվա գլխավոր թեման ՊԿԱԾ-2022-ով իրականացվող աշխատանքների լուսաբանումն էր: Խոսքը Երևանի Նոյ, Խաղաղ Դոնի և Աջափնյակ թաղամասերում իրականացվող լայնածավալ ծրագրերի մասին է: Ներկայացվել է դրանց կարևորությունը քաղաքի հազարավոր սպառողների սպասարկման բարելավման առումով: Ընդ որում, հրապարակումների հանրամատչելիությունն ու դյուրընկալումն ապահովելու նպատակով դրանք ուղեկցվել են 7-8 լուսանկարից բաղկացած GIF-երով:

Իսկ ընկերության շահագործման և տեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվող ընթացիկ ծրագրերի լուսաբանումից կարելի է առանձնացնել Մեղրիում տարածաշրջանի ջրամատակարարման ցանցի բարելավմանն ուղղված՝ շարունակական աշխատանքները՝ լուսանկարաշարով, որի ժամանակ Ջրառ և «Մեղրի» շահագործման ծառայություններն իրականացրել են 7 միջոցառում, տնտեսելով զգալի ջուր ու ապահովելով համայնքի բնակավայրերի կանոնավոր ջրամատակարարումը:



Ներկայացվել են նաև համակարգի զարգացմանն ուղղված ընթացիկ ներդրումային ծրագրերը Արմավիրի Այգեկ և Բաղրամյան գյուղերում, Արարատյան, Լճաշենի, Շոր-շորի պոմպակայաններում, Էջմիածնում, Շիրակի Ղազանչի գյուղում, Էրեբունիում, Չարենցավանում, Իջևանում, Սիսիանում, Սպիտակում, Եղեգնաձորում, Ծաղկաձորում, Նոր Նորքում, Սարի Թաղում: Թերևս հարկ է առանձնահատուկ նշել «Դավիթ Բեկի փողոց – Վարդաշեն և Մուշավան» թաղամասեր կարևոր ջրագծի՝ փականային համակարգով հանդերձ վերակառուցումը, որի շնորհիվ բարելավվեց ինչպես նշված թաղամասերի, այնպես էլ Սարի Թաղի ջրամատակարարումը:

Հաշվետու ամսին շատ էին ջրագծերի վթարները, այդ թվում մայրուղային ջրատարների կանգառները, որոնք ուղեկցվել են լայնածավալ և երկարաժամկետ ջրանջատումներով: Դրանց բացասական հետևանքները հանրության շրջանում մեղմելու համար ՀԿԲ-ն ընկերության շահագործման և տեխնիկական տնօրինությունների աջակցությամբ հաճախ վթարների, աշխատանքների վայրում իրականացրել է օպերատիվ տեսալուսանկարահանումներ, որի շնորհիվ ջրանջատումների մասին մամուլի հաղորդագրությունները մեծամասամբ ուղեկցվել են տեսանյութերով, լուսանկարներով և GIF-երով: Այսպիսով, կանխվել են հնարավոր թյուրըմբռումները, ասեկոսները կամ մանիպուլյացիաներն առ այն, որ ջրանջատումները չեն կրում լուրջ բնույթ կամ Վեոլիա ԹԻՄը բավարար ջանքեր չի գործադրում վթարների արագ վերացման համար:



Դրա վառ օրինակը Շոր-շորի ջրաղբյուրի պոմպակայանում կայծակի հարվածից էլեկտրական ենթակայանի հրդեհն էր, որը բերեց զգալի ջրանջատման Երևանում ու հարակից տարածքներում: Թե հայտարարությունն այդ մասին և թե աշխատանքների ընթացքը ՀԿԲ-ն լուսաբանեց օպերատիվորեն, օգտագործելով լուսանկար ու տեսանյութ: Նշվեց, որ նման բարդ ինդիքը Վեոլիան լուծեց 1 օրից էլ պակաս ժամանակում:

Դիդակտիկ նյութերի ուղեկցությամբ են լուսաբանվել իրականացվող աշխատանքները «Արարատյան» պոմպակայանից դեպի «Նորարաց» ՕԿՁ ձգվող ջրատարի վրա, վթարների վերացումը Երևանի Ավան վարչական շրջանում, Սյունիքի «Մուխուրթուրյան-Գորիս» ջրատարի վրա, Ծենգավիթի ջրագրկման պատճառ հանդիսացած Գառնի-Երևան մայրուղային ջրատարի վրա, Երևանի Լենինգրադյան փողոցի

պոլիէթիլեն ջրագծի վրա, Մալաթիա-Մեքաստիայի Անդրանիկի փողոցում խոշոր խողովակի վրա վայրկյանում 32 լիտր կորստով, «Արզնի 2-Երևան» մայրուղային ջրատարի վերանորոգումը Կորեայի ձոր կոչվող հատվածում, որի պատճառով դադարեցվել էր Արաբկիրի ջրամատակարարումը, Մասիսի Նորաբաց գյուղի հարակից «Արարատյան» և «Արզական» մայրուղային ջրատարների միացման վթարված տեխնիկական հանգույցի վերանորոգումը, որտեղից ջուր են ստանում Արարատի մարզի և Երևանի մի շարք բնակավայրեր:



Շարունակելով հանրությանը ներկայացնել ընկերության տարբեր ծառայությունների աշխատանքն ու համակարգը կառավարելու, զարգացնելու ուղղությամբ տեխնիկական առաջընթացը, հաշվետու ամսին տեղեկացվել է էլեկտրոնային հոսքաչափերի կիրառության տեխնոլոգիայի ու արդյունքների մասին՝ լուսանկարաշարով, Նոր Նորքի 9-րդ զանգվածի 38 շենքում հայտնաբերված հոսակորստի օրինակով:

Հունիսին ընդհանուր առմամբ իրականացվել է 25 հրապարակում, ընդգրկելով ընկերության գործունեության գրեթե բոլոր ուղղությունները, չհաշված խոշոր ջրանջատումների, մրցույթների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://www.veolia.am) պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/Veolia_Jur) էջերում:

*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● ՈԱԱ բաժինը, հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Գլխավոր գործադիր տնօրեն պրն. Անտուան Ֆրերոյի՝ 2022 թվականի մարտի 28-ի Ուղերձը սույն թվականի սեպտեմբերի 19-ից 23-ն ընկած ժամանակահատվածում «Առողջության և Անվտանգության Միջազգային Շաբաթ 2022» ամենամյա ութերորդ միջոցառման անցկացման վերաբերյալ հաշվետու ամսում իրականացրել է «ԱԱ Միջազգային Շաբաթ-2022» միջոցառման կազմակերպման և անցկացման վերաբերյալ ծրագրի, «Դեմ առ դեմ սեմինար» և «Առցանց սեմինար» նյութերի, դրանց անցկացման կանոնների վերաբերյալ փաստաթղթերի հայերեն թարգմանության և ադապտացման և այս շրջանակներում «Անվտանգությունը մեր ձեռքերում է» և «HiPo/Աննշան միջադեպը կարող է վերածվել լուրջ ֆասավաճքի» պոստերների հայերեն թարգմանության, տպագրության աշխատանքներ, ինչպես նաև «ԱԱ Միջազգային Շաբաթ-2022» միջոցառման կազմակերպման և անցկացման հետ կապված նախապատրաստական այլ աշխատանքներ:


5.2. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱԼՆԵՐ

● ՈԱԱ բաժինը, հիմք ընդունելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02 Լ հրամանի պահանջները, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և էլեկտրոնային «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից, Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի հունիսի 27-ի N 3461 Ա հրամանի հիման վրա Ընկերության քլորակայանների ինժեներատեխնիկական անձնակազմի քլորի օպերատորների և պատասխանատուների թվով 14 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց 3 մոդուլից բաղկացած ստորև ներկայացվող մասնագիտական որակավորման հեռավար/առցանց դասընթացներ/գիտելիքների ստուգում՝

- ▶ «Քլորակայանի օպերատորի և քլորակայանի շահագործման պատասխանատու անձի որակավորման» հեռավար/առցանց դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջները հեռավար/առցանց դասընթաց:
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» հեռավար/առցանց դասընթաց:



2021-2022թթ. կազմակերպված դասընթացների/թեստավորումների (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.3. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 1 քլորակայանում, 1 ՋՄԿ-ում, 37 վարչական շենքում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուսնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 13 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով զծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2022 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների



5.4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ, ՄԻՄ-ԵՐԻ և ԱՅԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ:

● Սույն թվականի հունիսի 29-ին «Հարավ» շահագործման տնօրինության «Միսիան» շահագործման տեղամասը՝ ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցեց Արտակարգ իրավիճակների նախարարության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Միսիանի համայնքապետարանի, «Խուստուփ» փրկարար ջոկատ ՀԿ-ի կողմից կազմակերպված Սյունիքի մարզի Միսիան խոշորացված համայնքում «Ուժեղ երկրաշարժի դեպքում Միսիան խոշորացված համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով Շտաբային ուսումնավարժությանը, որի ընթացքում խաղարկային միջանկյալ միջոցառումների հիման վրա պատրաստվեց գեկույց՝ վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման, տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման կարգի պահանջներին համապատասխան չափաքանակներով ջրով ապահովման և այլ միջոցառումների վերաբերյալ և ներկայացվեց ուսումնավարժության ղեկավարին:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Հունիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կատարվել են համակարգիչների վերաբաշխման աշխատանքներ՝ անմխիթար վիճակում գտնվող համարգիչների պահուստավորում և գույքագրում են Ջրային Կոմիտեում:
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Նոր մասնաճյուղերում, որտեղ անհրաժեշտություն է եղել, տեղադրվել են նոր տեսահսկման համակարգեր:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Սպասարկվել է մոտավորապես 350-400 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 500 SS աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Հունիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀՕԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:

● «Հայ Փոստ» ընկերության հիբրիդ և էնվելոփ համակարգերի ինտեգրման ուղղությամբ իրականացվել են համապատասխան աշխատանքներ:

● Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Տեղամաս	Խախտման արձանագրություն		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Յյուախ	16	10.9	2.0
Էրեբունի	12	10.8	2.0
Շենգավիթ	28	13.4	2.6
Կենտրոն	11	7.3	1.5
Արաբկիր	12	29.6	5.9
Մաշտոց	59	78.6	14.2
Շահումյան	32	56.0	10.1
Եղվարդ	4	0.7	0.1
Քանաքեռ-Զեյթուն	10	4.3	0.7
ՍԿԲ	165	363.0	58.9
Լոռի	30	17.9	3.2
Շիրակ	62	65.0	10.5
Արթիկ	10	3.1	0.5
Արարատ	22	3.3	0.6
Աբովյան	41	23.0	3.9
Հրազդան	7	5.9	1.1
Ալավերդի	5	2.4	0.4
Աշոցք	2	1.0	0.2
Արտաշատ	18	3.8	0.7
Բերդ	1	0.2	0.0
Գավառ	21	8.9	1.6
Գորիս	2	1.8	0.4
Եղեգնաձոր	1	0.5	0.1
Էջմիածին	10	6.9	1.2
Թալին	1	0.3	0.1
Իջևան	4	0.3	0.1
Կապան	6	8.3	1.4
Մասիս	26	10.5	1.8
Մարտունի	1	5.7	1.1
Մեղրի	1	0.5	0.1
Նոյեմբերյան	3	1.5	0.3
Արմավիր	3	0.8	0.1
Սևան	4	1.2	0.2
Աշտարակ	9	3.1	0.5
Զարենցավան	15	7.0	1.3
Սիսիան	10	7.2	1.3
Սպիտակ	1	0.4	0.1
Ստեփանավան	24	12.4	2.1
ԸՆԴԱՄԵՆՆԸ	689	777.7	132.7

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Տեղամաս	Լաբորատորիա			
	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	62	87.41	79	0.49
Էրեբունի	64	44.12	86	6.73
Շենգավիթ	40	21.69	85	0.98
Կենտրոն	48	36.28	76	1.42
Արաբկիր	38	27.29	39	0.83
Մաշտոց	102	120.87	128	0.86
Շահումյան	70	51.16	110	0.69
Եղվարդ	16	13.99	10	0.08
Քանաքեռ-Զեյթուն	44	21.89	196	1.27
Լոռի	36	54.50	37	26.76
Շիրակ	101	77.04	82	2.21
Արթիկ	19	6.74	38	0.19
Արարատ	13	3.24	33	0.24
Աբովյան	111	88.81	40	0.26
Հրազդան	21	6.88	26	0.20
Ալավերդի	3	1.29	17	0.16
Աշոցք	9	3.87	2	0.02
Ապարան		-	3	0.01
Արտաշատ	6	2.76	31	0.33
Բերդ	4	0.97		-
Փավառ	23	9.08	79	0.72
Գորիս	19	9.86	1	0.00
Դիլիջան	20	20.05	5	0.05
Եղեգնաձոր	12	6.30	18	0.26
Էջմիածին	28	16.32	46	1.77
Թալին	3	0.75	9	0.09
Իջևան	9	1.42	5	0.06
Կապան	18	6.70	13	0.41
Մասիս	29	15.78	26	0.19
Մարտունի		-	7	0.04
Մեղրի	9	6.57	3	0.04
Նոյեմբերյան	15	7.22	3	0.06
Արմավիր	62	49.65	58	0.47
Ձերմուկ	5	1.29	7	0.01
Սևան	21	10.00	11	0.28
Վայք	4	2.06	3	0.09
Վարդենիս	1	1.55		-
Աշտարակ	19	6.50	20	0.30
Զարենցավան	34	13.04	20	0.06
Սիսիան	24	32.90	19	1.13
Սպիտակ	8	0.90	3	0.05
Ստեփանավան	16	8.34	12	1.96
Տաշիր	4	1.80		-
ԸՆդամեն ը	1190	898.86	1486	51.79



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am